



## ՕՐՄԱՆՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՀԵՐԻՑ

Առաքելության կնիքը, դոր Հայոց Եկեղեցին ամեն ատեն իրեն սեփականած և յուրացուցած է, և զոր ամեն պաշտոնական գրությանց մեջ համարձակորեն հոչակած է, մեկ կողմեն հիմաստատե անոր սկզբնական և նախնական ծագումը, և մյուս կողմէն հիմալաստե անոր ուղղակի ինքնուրույն սկզբնավորությունը, առանց ուրիշ հնագույն եկեղեցվոր մը գործակցության:

... Բավական ըլլա գիտնալ, թե Հայոց Եկեղեցվոր ուղղակի առաքելական ծագումը, Եկեղեցական պատմության մեջ, ստուգ և անհերքելի եղելություն մը պետք է նկատվի, հարենման ուրիշ առաքելական Եկեղեցիներու ծագումին: Եթէ երբեք այն ավանդական և պատմական աղբյուրները, որ այս եղելությունը հիմալաստե, քննադասական դիտողությանց կրնան առիթ ընծայել, դիտել կուտանք, որ Հայ Եկեղեցվոր ավանդությանց դեմ հարուցվելիք քննադասառությունները ավելի զորագոր չեն քան այն քննադասությունները, որոնք հարուցված են այն Եկեղեցիներուն ծագումին մասին, որոնք ընդհանրապես իրրե առաքելական ճանշցրված են:



Հայոց Կաթողիկոսությունը երրեք տեղագրական անուն շունեցավ Աթոռին կամ Հայրապետանոցին տեղեն առնված, այլ միշտ կոչվեցավ Կաթողիկոսություն Ամենայն Հայոց: Այդ կոչման գորությամբ նա իրավունք ունեցավ յուր Հայրապետանոցը հաստատել այնտեղ, որ կգումար վեր Ազգային քաղաքական կեդրոն, որն ալ ըլլար ժամանակին իշխող կամ տիրապետող կառավարության գլխավոր քաղաքը:



Հայոց Եկեղեցին միարանությունը հասկավ միշտ, բառին ճիշտ և սեղմ նշանակությամբ: Նա միարանություն ըսկելով, ուղեց Եկեղեցիներու միշտ ունենալ հոգմորական հաղորդակցություն, փոխադարձ հարաբերություն, և իրարու դիրքին հանդեպ հարգանք. յուրաքանչյուրին համար յուր շրջանակին և սահմաններուն մեջ ազատություն, և ամենուն վրա տիրապետող բրիտոնինեական սուրբ սերու: Նա երբեք չուպեց հանդուրժել, որ միարանությունը տիրապետության փոխվի և մարդուրսության վերածվի: Դժբախտաբար Հունական և Հատինական Եկեղեցիներ, իրենց քաղաքական և կենցաղական դիրքերուն առավելութենին գրգռվելով, այն համոզմամբ վարվեցան, թե Եկեղեցիներու միարանությունը ուրիշ կերպով չի կրնար իրականանալ, բայց եթէ ուրիշները իրենց Եկեղեցվույն հնագանդեցնելով:

Ծշմարտությունը խոսելու խղճահարությունին մինչև անխորհրդապահության ծայրահեղությունը մղելե չքաշվեցանք, և համարձակ հայտնեցինք այն աղետալի կացությունը, որուն հասած էին Եկեղեցին և Ազգությունը միշին գարուն ատեններու: Բայց արդարութենք շշեղելու համար պետք է նաև հայտարարել, թե Հնար չէ բնավ Հայ Եկեղեցին մեղադրել իրը քաղաքական և կենցաղական անկումին պատճառ, և իրը պատասխանատու Ազգին գլուխը Եկած աղետներուն, ինչպես որ Հոռմեականության ջատագովներեն ոմանք հանդինած են ըսկի: Միջնադարյան Արևմուտքին անկյալ և ողբալի վիճակը, և Հոռմեական Եկեղեցվու

կողմեն հանուն կրոնի գործված մեծեղեռն զեղծումները, բավական են Հայոց Եկեղեցին մեղաղրանքն զերծ պահելու և իրեն դեմ խոսող անդուսն բերանները կարկելու:



Եթե երբեք անակնունելի հաջողությամբ մը հնար ըլլար, որ զիխավոր հնավանդ Եկեղեցիներ իրարու հետ, թե ոչ միավորությամբ և ձուլմամբ կատարյալ միության հասնեին, գոնե մեջերնին փոխադարձ և համերաշխ հաշտության մը հանգեին, հարկավ Հայ Եկեղեցվո գրութենեն տարբեք գետին մը պիտի շկարենային գտնել, ցանկացյալ խաղաղությունը իրականացնելու համար:

... Հայ Եկեղեցվույն ընդունած դավանական հավատալիքներուն քիշությունը պետք չէ որ պատահական պարագայի, ոչ ալ անխորհուրդ պատահարի վերագրվի: Այդ բանը վարդապետական ուղղության մասին ընդունված խոհական սկզբունքի մը հետևանք է:



Հոռմեադավան անձ մը ամեն կողմեն պարփակված, չի կրնար այսօր բաց կողմ մը գտնել, ուսկից կարենա յուր անձնական կարծիքներուն անցք տալ, և ոչ ալ ասպարեզ մը, որուն մեջ կարենա յուր ուսումնաւորությունները կատարել: Բայց ի՞նչ ըստք: Ոչ թե ուսումնասիրությունը, այլ նույնիսկ մտածումն ալ հոռմեադավանին արգիլված է այլևս: Նա պետք է պատճառաբանելի հրամարի, մինչև իսկ յուր իմացականության կիրառություննեն ալ զգուշան, որովհետև անհնար է իրեն որեկից կրոնական կետի մէ վրա խորհրդածել, առանց յուր ճամրուն վրա դավանական կանոնի մը հանդիպելու, որ վերջնականարար կիսկե ուսումնասիրությանց ասպարեզը:

... Հայ Եկեղեցին երբեք հավակնություն չէ ունեցած յուր որոշումներուն դավանական հավատալիքի ուժը տալ, և ոչ ալ իբր հերետիկոսներ և հերձածողներ դատապարտած է այն Եկեղեցիները, որ իրեն ընդունած վարդապետության չեն համակերպիր: Ամեն վարդապետական կետեր, որոնք բաժանման գիծ մը կգծեն Հայ Եկեղեցվո և ուրիշ Եկեղեցիներու միջտեղ, մեր հայտարարությունը հավաստելու մի-մի փաստեր են, քանի որ երբեք ուրիշ Եկեղեցիներու վրա բռնանալու կամ հավակնելու կերպությամբ գործածված չեն:

Հայ Եկեղեցին իսկապես և տիրապետ տիեզերական ժողովներին զատ, ուրիշ որեւէ մարմինի կամ աստիճանավորի վրա իրա-

վունք չի հանչնար դավանական վճիռներ արձակելու, որ է ըսել, թե այդ իրավունքը կվերագրե միայն այն մարմինին, որուն մեջ քրիստոնեության ամեն ճյուղերը կմիանան, և համամիտու ու համաձայն կունելին հայտնյալ ճշմարտության մեկ կետին վրա: Այդ համամիտու համաձայնությունը այլու ճշմարտված չէ հինգերորդ դարուն մեջ սկսած պառակումնեն այս կողմը: և պիտք է հայտնապես ըստնք, թե հնար ալ պիտք ըրլար, որ ասկե ետքն ալ ճշմարտվի, քանի որ կարունակեն այն հակառակությունները, որոնց համար եկեղեցիները իրարմի բաժնությամբ ճամարտված խորհուրդները:



Լատին Կաթոլիկ Եկեղեցին, որուն տարածերժիկ առանձնատակության հոգին աշխարհաբարուզ է, իրեն իբր սկզբունք հրաշկած է աններողամիտու գրության հայուրար բանաձեռ, թե Առտահու Հոռմեական Եկեղեցվո չի հավիտենական փրկուրյուն: Հույն Օրթոդոքս Եկեղեցին ալ մյուս կողմեն, մինչև իսկ կմերժե վավերական հանչնար իրեն ընդունած ձեռքեն տարբեք կերպով մատակարարված խորհուրդները...

Հայոց Եկեղեցին բնավ այս տեսակ աններողամիտու հոգի մը շունի, և ընդունիր, որ որեկից մասնավոր կամ ազգային Եկեղեցի, որչափ ալ ընդարձակ ըլլա, իրավունք ունենա իրեն սեփականել ընդհանրական կամ տիեզերական Եկեղեցվո նկարագիրը:



Հայոց Եկեղեցվո ընդունած ու պաշտուանած սկզբունքներուն համաձայն, Եկեղեցական գերագույն իշխանությունը կպատկանի տիեզերական ժողովներուն, ուր հավաքված ըլլան մասնավոր Եկեղեցիներուն վիրապետական մարմինները: Այդ իշխանությունը բացարձակ է դավանական իրադիրներուն համար: իսկ բարեկարգման խօնդիրներ երկրորդական կարգի մեջ կգտնվին:



Այս մասին նոր ըսելիք շունինք Հայ Եկեղեցվույն վրա, բայց եթե որ հակառակ յուր հավատացյալներուն աշխարհի ամեն կողմերը ցրված ու սփռված ըլլալուն, և հակառակ երկու Կաթողիկոսական և երկու Պատրիարքական մեծ Աթոռներ ալ հաստատված ըլլալուն, ամենքն ալ մեկ կեղրոնի և նթարկված կմնան, և էշմիածին նստող Ամենայն Հայոց Կաթողիկոսին իրավասությունը կտարածվի բովանդակ Հայաստանյաց Ռողափառ Եկեղեցվո վրա:

Այսօր ալ բնավիկան արգելք մը չկա, որ նորամուտ սովորությունը, որշափ ալ տարածված ըլլա, հնավանդ եկեղեցական կանոններուն տեղի չտա, և ամուսնացյալ կղերի առջև բաց ըլլան եկեղեցականության բարձրագույն աստիճանները: Այս պարագային Ազգը մեծամեծ օգուտներ ալ կունենար, որովհետև այս կերպով ամուսնացյալ կղերը կազատեր ստորոտիթյան վիճակե մը, որ ոչ մի կերպով շարդարանար, և որուն բուն պատճառները՝ իրեն վրա դրված պատահական զրկումներն են:... Երբոր բահանայական դասակարգին առջև հասացադիմելու ասպարեզը բնդարձակվի, ազգայիններուն զարգացյալ դասակարգն ալ գժվարություն չի զգար այլևս ամուսնավոր բահանայության շարքին մեջ մտնել, և ասով դասակարգային պատիվը ազգայնոց աշքին առչել կրածրանա, և բահանաներն ալ արժանավորագույն կերպով կլրացնեն իրենց կոչումին պարտավորությունները, և կհամապատասխանեն դարուս դարգացման աստիճանին:

Բոլոր քրիստոնյա եկեղեցիներուն մեջեն Հայ եկեղեցին է, որուն մեջ ժողովրդական հոգին ավելի ճշմարտությամբ և ավելի ընդարձակությամբ կփայլի: Նա բոլորովին օտար է եկեղեցվո մեջ կղերական կամ բահանայական բացառիկ տիրապետություն հաստատելու դրութենեն, որ այնշափ վնասակար եղած է կաթոլիկ եվլոռպիոն, և եղած է այն համերաշխությունը, որ պետք էր տիրեր եկեղեցվո պաշտոնյաներուն և հավատացյալներուն, չողևոր հիմնական և հոտերուն միշեւ Աշխարհականներուն եկեղեցական վարչության մասնակցելու իրավունքը Հայոց եկեղեցվո պատության մեջ, և յուր արմատներն հաստատված են քրիստոնեության ճշշմարիտ և նվիրական ավանդությանց մեջ:

Հայոց եկեղեցվոյն նկարագիրը իսկապես և ամբողջապես Ազգային եկեղեցվո մը նկարագիրն է, ինչ որ հնավանդ եկեղեցիներու էական տիպարն է, իրեն կեղունը և գերագույն իշխանություն վայելող Աթոռն է եղմիածինը, որուն իրավասությունը կտարածվի բոլոր հայադարձական հավատացյալներու վրա, Անոնք ուր ուրեք ալ գտնվին, բոլոր աշխարհի մեջ սիրված, ամենն ալ միևնույն հոգերո հոտի բանավոր ոչխարներն են:

Եկեղեցին եղած է, որ անվիճելի կերպով ներարկած է անոր մեջ ներքին կենսականության տարրերը, և պատրաստած է արտաքին միջոցներ և գործնական եղանակներ՝ գործառնական ձեռնարկներ՝ Հայ ազգության գոյությունը ապահովելու, եկեղեցվո շնորհիվ է, որ Հայությունը մնացած է իր հատուկ և ինքնուրուցն մարմին մը, որ դարերու այլայլությանց և արկածներու բռնությանց ներքեւ ալ, ինքն իր մեջ շարունակվելով միշտ նույն մնացած է:

«ԱՅՅՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ», Ա. Պոլիս, 1911)

\*\*\*

Հայաստանյայց եկեղեցվո Գերագույն Աթոռը նախամեծար Արարատյան Աթոռն է, հաստատյալ և պայծառացյալ ի Տեղին իշման Միածնին ի լուսավորշահման Ս. Էջմիածինի Պատմությունը կավանդե, թե էջմիածնի գահակալթ ատեն մը նստեր են ևս ի Սիոն և Հռոմելիա, պանդիտորեն դեգերեր են ի Սյամ լիո, ի Սամնդպավ, ՀԱնի, ՀԱրգինա, և ՀԱղթամար, ժամանակ մ'ալ բնակեր են ի Դվին, այլ իրենց նախնական Աթոռը եղեր է Ս. Էջմիածին Միածնին իշմամբ հաստատյալ և հրամայալ: Թեպետ աթոռակալք՝ ժամանակին պահանջմանց պատկառ կալով տեղափոխվեր են, այլ չէ տեղափոխվեր աստվածահրաշ Տեղին իշման, և չէ փոխվեր Աթոռուն իշխանությանց և իրավասությանց և արտոնությանց և պաշտամանց կերպն ու կարգը, և Հայաստանյայց Աթոռը միշտ և հարաժամ անդատին ի սկզբանե և յուր ծագմանե եղեր է ազատ և ինքնազլուի:

(«ԱԹՈՌՈ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ», Վաղարշապատ, 1886)

\*\*\*

Ավետարանը յուր պարզ ինքնության մեջ առնված ատեն, և առանց հակառակաշունչ կամ նախապաշարյալ ըմբռնումներու կարդացված ատեն, անսխալ ուղեցուց մըն է հավատացյալին՝ յուր գերբնական խորհուրդներով, բարոյախոսին՝ յուր անստերուր պատվերներով, կենցաղագետին՝ յուր ուղիղ սկզբունքներով, հաջողության մեջ յուր խոհական իրատներով, ձախորդության մեջ՝ յուր սրտապնդիչ մխիթարություններով:

... Մեր ազգային պատմությունն ալ չի վկայեր միթե, որ մեր քաջարի նահատակներ և քաջասիրու կիներ, ժիրաժիր եղիտասարգներ և աստվածավախ ժողովուրդներ, Ավետարան ձեռվենին կղորանային ճակա-

տամարտներու մեջ, կոգելորվեին հալածանքներու հանդեպ, և գործունեության կըորդորվեին դրկանքներու ներքեւ:

(«ՀԱՄԱՊԱՏՈՒՄ», Կ, Պոլիս, 1911,  
«Խախաբան»)

\* \* \*

Ավանդական և ծիսական կանոն է, նոր սնտիր կաթողիկոսներուն անունը եկեղեցական պաշտամանց մեջ հիշատակելու համար, սպասել անոնց օժվելուն, որ իրենց գահակալության իսկական նվիրագործումն է: Այդպես կը նաև կաթողիկոսական օժման Մաշտոցը:

(«Ա.Զ.Գ.Ա.ՊԱՏՈՒՄ», Գ, Երուաղեմ, 1927.  
Էջ 3776)

\* \* \*

Կյանքիս ամեննեն ցայտուն և ամեննեն նշանավոր կետը եկեղեցի փոխելու է:

...Առաջին միտքը ծագած է Հիսու, նույնիսկ ուսանողությանս օրերեն, քանի տեսած և ուսած եմ Հոռմեադավանության քաշկոտուք պատճառաբանությունները, նախապաշտյալ տեսությունները, այլեւայլ մեկնությունները և կամայական եզրակացությունները:

...Հոռմեադավանութենք հեռանալու միտքը իմ վրա, ո՞չ Կիրքի մը վայրենական որոշում և ո՞չ շահադիտության կեղծիք էր, այլ երկար ատեն խորհված և կշռված, և խորհական քայլերով հառաջացած գործ մը եղած է:

\* \* \*

Հավատքին անհրաժեշտության համոզումը կը աղեմ մարդկային բնության իսկ իր կազմակերպությունը լրացնելու համար հավատքի պետք ունենալեն բնական և կենցաղական շրջանակին մեջ: Հավատքի պահպանությունը աշագին դատարկ մը կծե մտավորական բնության մեջ, և որովհետև գիտությունն ալ կը նորունի, թե բնությունը դատարկ կիսորչի, անկե կնուեցնեմ, թե հավատքը անհրաժեշտ պետք մըն է միտքին դատարկը լրացնելու: Այդ է հավատքի մասին ունեցած հավատքը:

Հավատքի շափ, և թերևս հավատք ալ ավելի զորավոր եղած է նույսի վրա համոզումս, այն հույսը, որ աստվածային նախախնամության և հովանավորության սկզբունքը կաղդե մարդուն: Այդ ազգեցությամբ է, որ առ Աստված զիմումը և հայցվածը, կամ սովորական բառով աղոթքը, անկեղծությամբ և համոզմամբ կիրարկած եմ ամեն պարագային: Ամեն գործի սկիզբին կամ ընթացքին, ամեն դժվարությանց առթիվ, ամեն նեղությանց մեջ, ամեն շփոթությանց հանդեպ, առ Աստված դիմումը հաստատուն:

սովորություն եմ ըրած պատանեկան տարիքես ի վեր: Խախադասած աղոթքս է Շնորհալիին «Պահապան ամենայնի»-ն:

\* \* \*

Բնական բերմամբ վարչական գործերու սիրահար չեմ եղած, և ուսումնական ու գրական աշխատությունները նախադասած եմ, նույնիսկ անհատական առավելությանց տեսակետեն, զի գրական արդյունքները մշտընշենական հիշատակ կրողուն, մինչ վարչականներ ապաշնորհ հետեւանքներ կարտագրեն:

Ինչ համոզմամբ և սկզբունքով պատրիարքությունը ստանձնեցի, նույն կերպով ալ զայն պահեցի տասներկու տարիներ, ինձի նվիրական պարտք համարելով Ազգը ընտրողական տագնապի շմատնել, և կամ անտերուն մնալու վիճակին շենթարկել:

\* \* \*

Վարչական պաշտոնները ապերախտ ասպարեզ մը կկազմեն, մանավանդ մեր Ազգին մեջ, որովհետև պարտքերը և պահանջները շատ ու շատ են, իսկ միջոցներն ու դյուրությունները քիչ և անբավական, որ է սսել, կատարյալ հաջողությունը անհնարին:

...Առաջին պայմանը ինքն իր գործին տեր ըլլան է: Գիտեմ, որ սահմանադրական և խորհրդակցական դրությունը պաշտոնի գլուխ գտնվողները կպարտավորե յուրովի և աղիկամի գործել, այլ ո՞չ թէ իր ինքնությունը ուրանալ:

...Աշխատած եմ, որշափ հնար է, իմ գործերու տերը ես ըլլաւ, օրենքին և կանոնին ապահոված շափը ձեռքե չհանել, խնդիրները ներկայելու մեջ պատշաճ զգուշավորությունը գործածել, ժողովականներու միտքերը կանուգին պատրաստել, գործին կամ խնդիրին թեր ու դեմ պարագաները հստակորեն հաղորդել, և այս կերպով որոշումը իմ նախադասած կողմը հակեցնել...:

Երկրորդ պայմանը անձնական օգուտ շփնտուելն է, կրկին տեսակետի ներքե, այսինքն՝ նյութապես շահ և օգուտ, և բարոյապես փառք ու պատիվ: Նյութական շահի իղձերեն հեռու մնացած եմ թե՛ բնական բերմամբ և թե՛ նախական դաստիարակությամբ...: Այսպես որ այսօր բացարձակապես ոչինչ ունիմ բացի գիրերս ու գիրքերս, և երսնամյա միջոցին մեջ կազմած մոտ 1 500 սոկով խնայողություն...:

Գալով բարյական օգուտին, այսինքն փառքին և պատիվին, համարձակ ըսեմ, թե անոր առջե անզգա չեմ եղած, և մինչե իսկ հրատարակությամբ ալ միտքս հայտնած եմ, թե փառասիրությունը վատ իղձ մը չէ, և թե փառամոլութենե տիրապես տարբեր է:

\*\*\*

Որևէ գործ մը ներկայացած կամ որևէ ձեռնարկ մը սկսելու ատեն, ուշի-ուշով բննել նախընթացն ու պարագաները, նպաստավոր ու աննպաստ հանգամանքները, հաջողության ու ձախողության կշիռը, և այնպես գործին ձեռք զարնել, ելքը անհավանական և հաջողությունը անստուգդ ձեռնարկներ զգուշանալ, ինքզինքը ձախողվածի փառանդեն հնարավոր չեռու պահել: Այս եղած է փորձառութենեն բաղած կանոնս...:

Ուրիշ գործնական սկզբունք մըն ալ ըրած եմ ինձի, մասնավոր և անհատական գործերով ինքզինքս շատ չծանրաբեռնել, երբ ընդհանուր և հանրային գործեր կան կատարվելիք...:

\*\*\*

Ավելի ծանր դժուղություններու առիթ տվավ սիրտի խնդիրը, մինչև իսկ հոչակելով, թե Օրմանյան սիրտ չունի: Սիրտ անունը կրկին իմաստով կգործածվի սովորական խոսակցության մեջ, երբեմն իրը կորով և երբեմն իրը գորով: ...Պահանջելի, որ մարդը զգացումով առաջնորդվի, զայն ստորացնել է ոչ թե բարձրացնել, և իմ համոզմամբ կատարելագույն է մարդը՝ որ միտքով, խորհրդածությամբ և կշռադատությամբ կառաջնորդվի, և պատահական զգացումը իրեն ուղեցույց և կանոն լրնդոնիր, երևութով չեխարվիր, ամեն ցույցի դյուրավ ականջ չեկախեր: ...Այս պարագաներու ներքեւ ալելի արդար էր ինձի համար ըսել, թե զգացումով կառավարվող մը չէ, թե միտքի կշռադատությանց համար հետեւող մըն է, և ոչ թե ըսել, թե սիրտ չունի:

Զիս խերձել ուզողներ իրենց բերնին ծամոց ըրին, իրը թե Համիդի կամակատար հետեւող և հաճոյակատար ծառա եղած ըլլամ, ինչ որ ճշմարտութենեն հեռու է: Ճորավոր և բռնալոր ինքնակալը խոնարհեցնել և հնազանդեցնել միտքե անցնելն ալ հիմարություն էր, և զիս այս վիճակի մեջ տեսնել ուզել եղջերվագաղ էր: Ինձի կմնար հարմար կերպերով, ճարտար դարձվածներով, հնարավոր միջոցներով Համիդի հայերու դիմունեցած ատելությունը մեղմացնել, հալածանքները թեթևցնել, արգելքները նվազեցնել, Ազգին կացությունը բարվոքել, ներքին կազմակերպությունը պահպանել, մեկ խոսքով՝ թիւ ու շատ տանելի վիճակ մը պատրաստել Այս ժրագիրը Համիդին ուզածը չէր, և երբ ես անոր կհետեւի, Համիդի հետեւող եղած չէի ըլլար. և այսշափը բավական է իմ վրաս հարուցված զրպարտությունը փարատելու:

\*\*\*

Ժողովականներու հետ կանոնական ճշտությունները հարգած եմ, այնպես որ տասվերկու տարիներու մեջ երբեք գժտության և հակառակության տեղի տրված չէ. իսկ հրաժարելս ետքը խոսված կամ գրված զրուցները խժիուղներու ձայնակից ըլլալու մարմաշուկ հայցված մտացածին բաներ են:

\*\*\*

Պատրիարքութենե առաջ ունեցած գործունեությանս պարագաները կոսակցականները վստահացուցած էին իմ մեջ իրենց համամիտ մը տեսնել, և թերևս չէին ալ սխալած վերացական տեսակետով. սակայն ես անհատապես, և մանավանդ պատրիարքության մեջ պաշտոնապես, չէի կրնար համաձայնի իրենց գործնական տեսակետին, որ բախտախնդիր և արկածախնդիր, անխորհուրդ և աննպատակ ձեռնարկներով կկազմը-վեր, և օգուտի ո՞չ մի ակնկալություն պարունակած ատեն՝ հայտնի վտանգներու և վնասներու կառաջնորդեր...:

Ինձի դեմ ամբաստանության և մեղադրանքի կետ ըրին, թե պատրիարքութենե հրաժարիլ չեմ ուզած: Չեմ կարծեր, որ մեկուն պաշտոն մը հանձնվի որպեսզի հրաժարի, զի պաշտոնը կարվի որպեսզի զայն պահե, ոժվարությանց տոկա, հանրության օգտին աշխատի, և ո՞չ թե յուր հանգիստը փնտու: Ուստի ես ալ կընդունիմ, թե անպայման հրաժարիլ չեմ ուզած, զի զայն անձնդյուրության միջոց և դասալքության գործ եմ նկատած. այլ հրաժարականները փորձած եմ իրեր կենսական խնդիր մը հաշողցներու միջոց, և երբեք փորձերս ալ ապարդյուն չեն եղած: Պատրիարքության վրա տասկերկու տարի տոկալս երբեք ինձ անձնդյուրություն չէ բերած, զի պատրիարքութենե առաջ ունեցած կենցաղս նույն է պահված, չեմ հարստացած, չեմ ճոխացած, և արտաքին երևույթներով, գունագեղ զգեստներով, շքանշաններու կիրառությամբ և ցուցադրության ձևերով չեմ շփացած:

\*\*\*

Գրական աշխատառությանց մասին տված տեղեկությանց նպատակը կրկին էր, զի երկասիրություններու ծանոթացներու ատեն կուզեի առավելապես զայն շեշտել, թե այնշափ միտքի ու սիրտի հանդարտություն ունեի, որ երբ մեկ կողմեն անտեղի և անիրավ հալածանքը կշարունակեր, ես կրնայի ամփոփ միտքով և անվրդով սիրտով լուրջ ուսումնասիրությանց և օգտակար աշխատասիրությանց նվիրվիլ...:



Հետեւաբար ո՞շ Ազգի դեմ ցաված եմ և ո՞շ հալածողներուն դեմ զայրացած, և ո՞շ ալ քեն ընելով Ազգին օգտակար գործ մը տեսնելու պատեհը մերժած:



Ես ազատաբար կընդունիմ բառնալ և հեռացնել մեր Եկեղեցին ամեն հունական և լատինական հետին ժամանակներու հավելվածները ու աղավաղումները, և համամիտ եմ մեր դավանականը ամփոփել Եփեսոսի ժողովով, մեր կանոնականը կազմել Թարգմանչաց դարով, մեր ծիսականը ձևակերպել առ առավելն Օձնեցիի ժամանակով, մինչև իսկ հավանիմ Շնորհալիի հավելվածները կամավորության վերածել և պարտավորի շճանչնալ: Ահա իմ ըմբռնած Եկեղեցական բարեկարգությունս, Հիմնական սկզբունքներու դեմ շմեղանշելով, հայկական դրության հավատարիմ մնալով, և իրապես ու տիրապես բեռները թեթևցնելու նպատակին ծառայելով: Շատ առիթներ ունեցած եմ իրեք ուսուցիչ և իրեք ուսումնասիրող մասնավոր կետեր զննելու և քննելու, և միշտ շատ թեթև և շատ ամփոփ գտած եմ Հայ Եկեղեցով նախնականը, նվազ բեռնավորյալ յուր դավանականը, ազատական յուր դրությունը, և զյուրատար յուր կանոնները: Հետեւաբար բավական է եկամուտները վերցնելով զոտ հայկականը պահել, որ շատերուն փափագած թեթևությունը իրականանա, ո՞շ թե ժամանակի պահանջին կամ ժամանակին մտայնության կամայական փաստով, այլ նախնականության և պահպանողականության հիմնմբ հաստատված....:

Երբոր էջմիածին ուսուցիչ էի, երջանկահիշատակ Մակար կաթողիկոսի խոսած եմ, բանիրուն և կարող և խոճական Եկեղեցականներեր հանձնաժողով մը կազմել, որ խնամով ուսումնասիր նախնական Հայ Եկեղեցին յուր ամեն տարրերով, զտե և զատե Հինն ու նորը, սեփականն ու եկամուտը, և յուր աշխատությանց արդյունքը կանոններու և հրահանգներու կերպով բանաձեռ, և յուր աշխատությունը անպաշտոն տպագրությամբ հղվի եպիսկոպոսներու, կարող վարդապետներու, ուսյալ քահանաներու և հմուտ աշխարհականներու, և անոնց տեսություններն ու կարծիքները հավաքվելով հանձնաժողովին դառնան, որ երկրորդ խմբագրությամբ ընդունելի կարծիքները յուրացնե, և այդ երկրորդ խմբագրությունը՝ իրեք պատրաստ նյութ՝ աղքային-Եկեղեցական մեծ ժողովի մը հանվի, և հաստատություններով ու փոփոխություններով վակերանա, և Հայ Եկեղեցով դավանության ու

վարչության, կանոնականության ու արդարության օրինագիրք ըլլա, և ըստ այնմ սկսի կատարվի ամենայն ինչ, որ Հայ Եկեղեցվոկյանը կկազմե և անոր զուտ ինքնությունը կապահովի: Կաթողիկոսը առաջարկս ընդունելի դատեց, և ինձի պիտի հանձններ նախապատրաստություններով զբաղի ամառնային արձակուրդին ատեն, սակայն ես կանուխին պարտավորվեցա էջմիածինն մեկնիլ, ինքն այ շատ շարությամբ, և զաղափարը գործնականության շմտավ: Սակայն ինչ որ հապաղած է՝ կորած չէ, կըսե լատին առածք, և ոչինչ կարգելու՝ որ ինչ որ այն ատեն չկրցավ գործադրվիլ, առաջիկային կարենա իրականանալ:



Տեսակ մը ուսուցչություն է քարոզչությունն ալ, որուն խնամով հետեւած եմ, և ընդհանուր ըմբռնման մեջ իրեք ընդունելի և գնահատելի քարոզի մը ճանչցված եմ: Քարոզչությանս մեջ հետեւած ուղղությունն եղած է անխտիր ժողովուրդին հասկացողության համաձայն խոսիլ, հետեւաբար իրրոր հարկ եղած է բարձր ոճ գործածած եմ, բայց ամեննեն սովորական, շրմեծ սոտորին, ոճով խոսած եմ հետամնաց զյուղերու մեջ: Զանացած եմ միշտ բարոյական գետինի վրա մնալ, վարդապետական նրբություններե և հուետորական դարձվածքներե խորշած եմ սկզբունքով, պատմականը դորձածած եմ պետք եղած շափով միայն: Դամբանականներու և հարսանիքներու մեջ զգուշացած եմ մարդահաճո և շողոքորթ ակնարիներե, իսկ հանդիսական ատենաբանությանց մեջ աշխատած եմ գործնական գետնի վրա մնալ, կացությունը անխարդախ բացատրել, և պետք եղած պայմանները հրահանգելի: Քարոզչական ոճը Դպրեվանքցվոց ալ հատկապես ավանդած եմ, և Դպրեվանքի ոճը սկսած է բեմերու վրա տիրապետել, հնորյան ընեն բոլորովին տարբեր, ավելի աղղեցիկ և ավելի զնահատված:



1. Կյանքը կատարյալ է, երբոր բնականին հետ բանականն ու բարոյականն ալ կմիավորե:

2. Բնականին համար աշխատությունը շափակոր է, բանականին համար նպատակահարմար, իսկ բարոյականին համար՝ անպայման:

3. Բնականին զարգացման ջանքը արդար և իրավացի է, բայց նպատակին համեմատելով օգտակար կըլլա:

4. Ընկերային ամբարտակին հաստատության հիմք բնականն է, ատաղձը բանականն է, բայց անոնք ամբացնող շաղախը բարոյականն է:

5. Ամեն անհատի հանրական զբաղումը անհրաժեշտ է. անզբաղ անհատը ընկերականության դավաճան է:

6. Ոչ մի զբաղում յուր բնությամբ ստորին է. ցուցադրությունը կարևորության շեղակի կհամեմատի. ստորինը ամեն զբաղման թերին է:

7. Աղնվագույն զբաղումներ բնկերականության պահանջ են, բայց գերագույն և

ընդարձակագույն պահանջ՝ արհեստականներն են:

8. Արհեստավոր դասակարգը յուր կարեռության համեմատ պատիվ ունենալու և ստանալու արժանի է:

9. Առանց բանականի կիրառության և բարոյականի պահպանողականության՝ լոկ բնականով օդ շնչելն ու մարմին պարարելը մարդկային կյանք չէ:

10. Կյանքին լրումը գործունեությունն է. լավ է կարճ կյանքը արդյունավորությամբ, քան երկար կյանքը ապարդյունությամբ:

(«ԽՈՀՔ ԵՎ ԽՈՍՔ», ԵՐՈՒՍԱԼԵՄ, 1929)

